

## «ՀԱՄԼԵՏԻ» ՄԻ ԱՆՏԻՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Հազորդում Գոհար Ազնավորյանի

Հայ թարգմանական գրականության մեջ բացառիկ տեղ է գրավում Արշակ Չոպանյանը: Հայ գրականության ընտիր գոհարները ելքրապացներին ծանոթացնելու և ելքրապական առավել ականավոր հեղինակների երկերը հայ ժողովրդի սեփականությունը դարձելու գործում Չոպանյանի երաժշտիրը մեծ է:

Չոպանյանը թարգմանական գրականության աստպարեզում աշխատել է շուրջ լորտուսնամյակ և վաստակել այն համբավը, որին աննայն իրավամբ արժանի է:

Ելքրապական գրականությունից Չոպանյանը թարգմանել է առաջին հերթին ֆրանսիական, մասամբ անգլիական, իտալական, լիճական, ամերիկյան, թիվյանան, հունական և այլ ազգերի հեղինակներին: Հեղեղներ գրանցեց մի քանիսին: Հյուսում (Հայր և որդի), Հաֆոնտեն, Բողոքը, Մյուսու, Միջնի, Լամարթին, Շաթրորիան, Գոտիի, Շերոպիր, Բայրու, Սկոո, Ծելլի, Պո, Վերգիլիս, Դանթե, Տասո, Անդրեսին, Միթրար Ալտ և այլ գորդների ստեղծագործություններից կատարած թարգմանությունները մինչև հիմա իոր ու հանգամանակի ուսումնասիրներ չեն ենթարկվել: Ի՞նչարկեն, Չոպանյանի այս կամ այն թարգմանության ամիսով գլխավառապես սփյուռահան և մասամբ օտար մածուլի է շերուած հողվածներ են լույս տանել, նրա թարգմանությունների հրատարակությունների առիթով մի շաբթ հայտնի հեղինակներ առաջարաններ են նվիրել, բայց գրանք չափազանց բիլ են Չոպանյան-թարգմանչի վիթսարի աշխատանքը գնահատելու համար: Եվ այդ բիլ էլ լավ հայտնի չէ մեր բնթերցոյ հասարակացնությանը:

Չոպանյանը ծնվել է 1872-ին, Պուսի Պեշիկիաց արքաքարձանում, ոսկերիչ՝ Հովհաննես Չոպանյանի ընտանիքում: Մեկ ամսական՝ զրկվել է մորից և մնացել օտարների խնամքին: Հայրը թեև հոգատար վերաբերումը է ունեցել երեխայի նկատմամբ, սակայն առանձին գորգուրանը չի ցուցաբերել, որին կարու է եղել մայրական դորովից զրկված փորբեկը: Մեծանալով և զրածանալ դառնալով օտար ընտանիքում ու միշավայրում՝ մեկսացած, իերամամփոփ կամք է ունեցել: Նվիրվել է լնոթերցանության և իր միիթարությունը գտել Հորեղբոր՝ գրասեր, ազգային գործիչ, ամիրա Հարություն Չոպանյանի հարուստ գրագրարանում: Փոքր հասակից կարգացել ու ծանոթացել է Պ. Ալշանի, Մ. Պէշիկիսլյանի, Պ. Դուրյանի, Բ. Բերզյանի, Խ. Նար-Պէտի, Համաշխարհային համբավ ունեցող ելքրապացի հեղինակներից շատերի գործերին: Օտար զրողներին սկզբում ծանոթացել է մայրենի լեզվով, իսկ մի փոքր ավելի ուշ՝ զպրոցում, բնագրերով՝ ֆրանսերեն, անգլերեն և մասամբ նաև իտալերեն (վերջինն ըստարանի օգնությամբ):

Չոպանյանը կարգացել և հարստացրել է իր զիտակիքները, միաժամանակ բառարանների օկնությամբ թարգմանական փորձեր է արել մի շաբթ անդանի հեղինակների երկերից:

Դպրոցական հասակում արած թարգմանական առաջին փորձերին անդրադառնալով, Չոպանյանը գրել է. «Արդյունքն անշուշապական պահասավոր էր, բայց ես մեծապես օդուզած եմ այդ թարգմանական առաջին աշխատանքներն, զոր բոլոր սրտով կանձնարարեր սկսնակներուն (խոսքը Ս. Բղլանի մասին է-Գ. Ա.), վասնզի դրական կազմավորման առաջին շրջանի մեծ հեղինակներու մտածման ու ոճին հետ այդ մոտիկ շփումը թանկա-

դին նպաստ մըն է պատանիի մը համար՝ իր մտավոր բարոյական ու գեղեցկազիտական ինքնությունը գտնելու, ձևավորելու, ջղկելու ճիշին մեջ»<sup>1</sup>.

Զարժանալի չէ, որ գրականության, թարոնի և ընդհանրապես արվեստի հանդեպ ունեցած հակումների մղումով, շատ վաղ, 11—12 տարեկան հասակից, Չոպանյանը զրադարձ է ինքնուրույն ու թարգմանական ստեղծագործական աշխատանքով ու թողել աշակին գրական ժառանգության, որի մի մասը հրապարակի վրա է, իսկ մյուս մասը, մեծ մասամբ անտիպ և ուսումնասիրության կարոտ, մնացել է իր մեծահարուստ արխիվում:

10—11 տարեկան Չոպանյանն ընդունվել է Պուսի Պեշիկթաշի թաղային Մաքրուցյան երկան վարժարանը, որ մեծ աղջեցություն է ունեցել նրա մտքի կազմավորման, զարգացման վրա: Հայոց լեզվից աշակերտել է «Շաղիկ հայ գրականության» դասագրքերի և երկու պատմավեպերի, Արշակ Երկրորդի և Պատիկ Թագավորի մասին գրած պատմական ուսումնասիրության հեղինակ Եղիշակը Սուրբայյանին: Իր ուսուցչի ձեռքի տակ և, ինչ խոսք, նրա աղջեցությամբ, Չոպանյանը կատարել է իր գրական առաջն բալլերը և հետագայում բազմից խոստավանել, որ ինքը շատ է պարտական ուսուցչին: Իր հուշերում նա երախտագիտությամբ է խոսել իր մի այլ ուսուցչի մասին ևս խոսքը Սրբաշխոն Թղթանի մասին է՝ թատերագիտ, արևմտահայ թատերական գործիչ, թարգմանիչ և երկարամյա մանկավարժ: Վերջինս առանձին ուշադրություն է Նվիրել ընդունակ պատանուն, օգնել, որ տպագրվեն նրա առաջին ինքնուրույն և թարգմանական գոշափորձերը: Դրանք լույս են տեսել 1885-ի «Բուրաստան մանկանց հանդեսում»:

Չոպանյանը Մաքրուցյան վարժարանում սովորել է թուրքերեն, ֆրանսերեն և անգլերեն: Այդ ժամանակաշրջանից մեզ հասել են մի շաբթ ինքնազիր բառարաններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի բառապաշար է ունեցել վերոհիշյալ լեզուներից և հատկապես անգլերենից: Վերջինիս ուսուցիչը եղել է հետազայում հայտնի կրթական գործիչ, մանկավարժ՝ Հովհաննես Հեղինյանը, որը հմտորեն դասավանդել է իր առարկան և որի շնորհիլ Չոպանյանը գեր այդ վարժարանում եղած տարիներին անգիտական գրականությունը թարգմանություններ է արել: Դրա մասին նա հիշատակում է իր հուշերում:

Մաքրուցյան վարժարանում ֆրանսերենի ուսուցիչներ են եղել Պոաժենթի և Լրսին տիկինները<sup>4</sup>: Այդ լեզվից Չոպանյանն այնքան բառապաշար և գիտելիքներ է ունեցել, որ գալուցում, հատկապես վերջին տարիներին, բնագրից թարգմանել է Վ. Հովհաննի «Արքայն զրուսնու» պիեսը, «Խնասուներեք» վեպից մի հատված, Ալ. Դյումայի «Դավաճանության ներսի կողմեց» կատակերգաթյունը: Խոտայցի բանաստեղծներից Տասոյի «Երուսաղեմ պատայալ»-ից մի հատված, Դանիելի «Գծոխըքը»:

Նույն վարժարանում սովորելի Չոպանյանը փորձել է հայերենից գրանսերենի թարգմանել հայ հեղինակներից մի բանիսի գործերը, այդ միում Մ. Պեշիկթաշլանի «Վահան» թատերգությունը, որի սրբագրությունը կատարել է ֆրանսերենի դասատուտիկին Պոաժենթին:

Ուրիշ թարգմանություններ էլ հասել են մեզ հեղինակի ձեռագրով, մի մասը լրիվ, մյուսները՝ թերի, երբեմն՝ գրարար, մեծ մասամբ՝ աշխարհաբար, որոնք պարզ գաղափար են տալիս պատանի թարգմանչի նախասիրությունների մասին:

Մի փոքր աղելի ուշ, արդեն Ղալաթիր կերպունական վարժարանում սովորելու ժամանակ, հայերենից գրանսերենի է թարգմանել Պետրոս Դորյանի լավագույն տաղերից մեկը և կենսագրական հակիրճ տեղեկությունների հետ միասին, իր ֆրանսերենի ուսու-

յիշ՝ կարումպիկի հանձնաբարականով ուզգարկել թրյուակել՝ «Հավլելյար» հանդեսում տպագրելու Չոպանյանի թարգմանությունը լույս է տեսնել հանգիստ խմբագրի հնակալ ժանությամբ. «Պ. Արշակ Չոպանյանի թարգմանությունը բանասահքի ձեռորդ կատարված թարգմանության է, միանգամայն ճշգրիտ և թթվառն, ան պահած է զմալիկի համբանագրին»:

\* \* \*

Արդեն երեսց, թե Չոպանյանը ինչ վաղ հասակից, դրեմի ժանկական տարիներից է սկսել գրադիմի թարգմանությամբ և այսուհետեւ, տանձամյակների ընթացքում, թարգմանական ինչպիսի բազմակողմանի գործունեալթյուն է ծավալել:

Կարո՞ղ էր, արցուոր, այսպիսի լայն նախանդությունների տեր Չոպանյանը շնչակիւլ գեղի Ծերապիրը, թարգմանել նրանից որին զրաֆաք, մանավանդ որ ինչ-որ շափով իմացի է անգերենն Պարզվում է, որ ոչ «Իմ լուսնի վեպը Հուշերից երևոմ է, որ Տաս և Գանմի թարգմանելիս ձեռնամուիթ է եղել թարգմանելու նաև «Համելետը»:

Դատանքը «Համելետի» թարգմանության, դրա հետ կազմած մի շաբ գավերպիրերին, վկայություններին և հայանական ենթադրություններին, որոնք հայ շերսպիրյան թարգմանական գրականության պատմության և նրա ուսումնասիրությամբ զրադիլոց մասնակիություն համար պետք է որ հետաքրքրություն ներկայացնեն:

Նախ երկու խռոր Չոպանյանի արթօնությունների մասին:

Չոպանյանի եղանական մահից հետո, 1957-ին, նրա արթօնություններից Փարիզից փոխազդեց Խորհրդային Հայաստան և հանձնվեց Դրահմանության և արգեստի թանգարանին:

Եվ հետո Չոպանյանի արթօնություր բաժանվում է երկու մասին՝ նամականին՝ շուրջ 32.000, գրած և ստացած նամակներ. Մյուս մասը՝ ստեղծագործական, որտեղ հավաքված են հրապարակախոսական, գրական, բանասիրական հոգվածները և «Անահիտ» հանդիսին ուղարկված թղթակցությունները. Այստեղ է ամփոփված Հայերնից օտար լեզվով և օտար հեղինակներից Հայերն Չոպանյանի կատարած թարգմանությունների մի կարեոր մասը. Հիմնականում՝ անախու, մասամբ՝ լրիվ, մեծ մասամբ՝ թերի, խառնիխուռն վիճակում, որոնց միավորելու, համախմբելու, ամբողջացնելու համար շաներ են թափում և զեռ պետք է զործի դրվեն:

«Համելետի» թարգմանության ձեռագիրը հայտնաբերվեց մաս առ մաս, երեմն թերթ առ թերթ՝ ուրիշ թղթերի ու գրությունների հետ խառնված վիճակում. Դժբախտաբար, զործ զեռներ չի ամրողացած, թեև հեղինակը մի տեղ վկայել է, որ թարգմանությունն ավարտել է:

Առաջին հարցը, որ անմիջապես ծագում է և կարող է բնականաբար հետաքրքրել ուսումնասիրողին, այն է, թե ե՞րբ է կատարվել թարգմանությունը:

Մի շաբ հայաստի փաստերի և Չոպանյանի հուշերում եղած վկայությունների հիման վրա կարելի է համաստել, այդ թարգմանությունը Չոպանյանն արել է Պոլսի Պեշիկ-թաշի թաղային Մարբուճյան փարժարանում ուսանելիս. Հայտնի է, որ Չոպանյանն այդ փարժարանն ըստունիվել է 10—11 տարեկան հասակում, այսինքն՝ 1882—1883 թվականներին. Մինչև 1886—1887 թթ. ուսումնական տարվա վերջը նա սովորել է այդ ուսումնարանում և գասրիթացն ավարտել փայլուն գնահատականներով:

«Իմ ուսուցիչներու՝ Եղիշաղար Մուրատյան և Սրապիոն Թղթական» վերնագրված հուշե-

բուժ Զոպանյանը գրել է. «Եր բաշակերանքն թե առած (Խոսքերը Ս. Թղյանի մասին է — Պ. Ա.), սկսած էի հասակն վեր հանդինթյուններ ունենաւ, փորձեր էի ֆրանսերն թարգմանութենան հայերենի վերածել Ծեբսպիրի «Համելետը» և Տանթեի «Դժոխքը» ամբողջությամբ ու ֆրանսերն ընազրեն՝ Շաթոպիրիանի «Որնեն», Տյումա հոր մեկ խաղ և Հյուկոյի «Խնսունկերք» ընդարձակ վկացած»:

30-ական թվականների այս հուշերից հնտու էլ, վերստին անդրադառնալով այս շրջանի սուելագործական կանքին, Զոպանյանը նշել է, որ «Համելետի» թարգմանությունը կատարել է մինչև Կերոսնական վարժարան մտնելը, այսինքն՝ մինչև 1887-ը:

Ի՞նչ է 14—15 տարեկան պատանուն մղել թարգմանելու «Համելետը»: Բայտ երեսուլիքին, այսուղեւ դեր են կատարել իր ուսուցիչները՝ անգլերնի դասատու Հովհաննես Հինդլյանը, որից նա առաջին անգամ լսել է Ենքսպիրի կյանքի ու գործի մասին, և թատրոնագիր, հայոց լեզվի ուսուցիչ Մրապիոն Թղյանը Վերշինս իր ժամանակի հայտնի գեմքերից էր, կրթությունն ստացել էր Վենետիկի Սուրադ-Ռիափայելյան վարժարանում, եղել էր Ղեռնդ Ալիշանի աշակերտը, բանաստեղծ Թ. Թերզյանի դասընկերը և Պ. Գուրյանի ուսուցիչը: Մերտորեն կապված լինելով հայ թատրոնական կյանքին, նա, բնականաբար, ծանոթ էր հայ թատրոնի շեքսպիրյան ներկայացումներին, որոնց մեջ փայլատակել է Պետրոս Աղամյանը:

Թղյանն Աղամյանին անձամբ ծանոթ է եղել դեռև 1868 թվականից՝ Պոլտում Ասիական ընկերության կազմակերպած ներկայացումների շրջանից, որին իր մասնակցությունն է բերել Աղամյանը: Այդ նույն ժամանակներում էլ ներկայացվել է Ս. Թղյանի «Տիգրանուհի» կամ «Հաղթանակ» հայոց ընդդեմ «Մարաց» պիեսը, որի ներկայացմանը հավանաբար ներկա է եղել Պ. Աղամյանը: Աղամյանի հաջողությունները շեքսպիրյան դերերում խանդականեցին նաև պոլսահայ մտավորականությանը: Պարզ է, որ դրանցից մեկն էլ պետք է Զոպանյանի ուսուցիչ Թղյանը լիներ: Ամենայն հավանականությամբ, Թղյանն իր թատերասեր աշակերտին ոգենորել է Ենքսպիրով ու Աղամյանով, և դա էլ նրան մղել է թարգմանելու «Համելետը»:

Կարենոր է մի ուրիշ հարց: Զոպանյանն ինչ լեզվից է կատարել իր թարգմանությունը:

Մեջ բերենք նաև Զոպանյանի վկայությունը. «Օգտվելով իր դասերեն և անգլիերեն-ֆրանսերեն բառարանն մը, Ենքսպիրի (որուն գործերուն անգլիերեն ընագիրները պարունակող ստվար հատորը գնած էի) «Համելետը», օգտվելով նաև ֆրանսերեն թարգմանութեններ մը, ամբողջապես հայերենի թարգմաներ էին»<sup>7</sup>:

«Հայատանի կոչնակում» հրապարակած հուշերում ևս Զոպանյանը հիշատակել է, որ «Համելետը» ֆրանսերեն թարգմանությունից վեր է ածել հայերենի, մինչեւ «Պայքարի» մեջ գրել է, թե թարգմանել է բնագրից: Այս երկու հիշատակումներից որն է ավելի հավաստի, ովքարանում ենք ասել, սակայն հայտնի է, որ Զոպանյանը շատ ավելի լավ է իմացել ֆրանսերեն, քան անգլիերեն, թեև բացառված չէ, որ թարգմանության ժամանակ ձեռքի տակ եղած լինեին և բնագրը և ֆրանսերեն թարգմանության օրինակը: Դա միանգամայն հավանական ենթադրություն է, քանի որ մի փոքր ավելի ուշ, արդեն Կենդրոնական վարժարանում, Բայրոնի, «Մանֆրեդը», Ալուսի «Ալիքնեղոն», Պոյի «Ագռավը» և ուրիշ երկեր, իր խոկ վկայությամբ, թարգմանել է բնագրից:

Իվս մի տվյալ, որ այս ենթադրությունը հաստատող անուղղակի վկայության դեր է կատարում. Զոպանյանի թղթերում վերշերս հայտնաբերվեցին մի քանի անգլիերեն-հայերեն ձեռագիր բառարաններ, որոնք կազմված են Մաքրուհյան վարժարանում սովորե-

լու առարիներին Գրանցից մեկը կազմված է 1886-ին, իսկ մյուսները, կարելի է վստահությամբ ասել, կազմված են Մարքուչյան վարժանամուսուններու և «Համելեար» թարգմանելու շրջանի մոտ Մրանց մեջ ընդգրիփած անցյերեն բառերից (որոնց թիվը համառ է շորջ 2500-ի) շատերի իմաստը կապվում է «Համելեար» մեջ զործածվող բառապաշտին և շիշալ ենթադրության օգործին է խոսում և այն փաստը, որ նույն շրջանում Զովանալուն անցյերենից է թարգմանել Գրեթեպինի «Ասոված» վերնագրով ընդարձակ բանաստեղծությունը:

Ասվածին ավելացնենք նաև Հաւելալը. Զովանյանն իր հուշերում դրել է, որ Մարտինյան վարժարանում ուսանելու ժամանակ շատ թարգմանություններ է արել ստար հեղինակներից, սակայն տպագրության է հանձնել միայն մեկը Դա, ինչպես և նրա թարգմանությունները լույս են տեսել «Բուրաստան մանկանց» հանդիսում: Զովանյանը 1886-ի սեպտեմբերի 29-ին մի համակ է դրել «Բուրաստան մանկանց հանդիսի խմբագրության»: Հիշատակելով այց հանգստում մի անգամ արգել տպագրված լինելու փաստը, նա նոր նյութ է ուղարկում՝ գրելով. «Հուսով եմ, թե մեծանուակ հեղինակին համբավն և զայն թարգմանելու համար իմ բրած անթիվ հիգերս պիտի կարենան բանալ «Բուրաստանին» սկսնակներն այս հոգվածին համար...» (հոսքը վերաբերում է Ֆենելոնի «Վարք նախնի մեծանուն փիլիսոփայից» գրքածիրի թարգմանությանը):

Տանիերեամյա պատանին արցեն համարձակությն հրապարակ է ենել իր ինքնուրույն և թարգմանական առաջին փորձերով. Հիրավի, զարմանքի արժանի երեսությ:

Ի՞նչ վիճակում է մեզ հասկ Համելեարի թարգմանության ձևուղիքը:

Թարգմանությունը կատարված է առանձին և առարեր շափի ու գույնի թերթերի վրա՝ ցրված ամրոց արխիվով մեկ: Գա երկարատև շանքեր պահանջեց զործն ի մի բերելու համար: Առայժմ հաշողվեց ամրողացնելու առաջին արարից մինչև չորրորդի Զ. տեսարանը ներառյալ: Փակասում է չորրորդի Յ. տեսարանը և հինգերորդ արարն ամրողաւթյամբ: Մնացածը դեռևս չի գտնվել, բայց բացառված չէ, որ արխիվի վերջանակն կարգավորման ժամանակ հայտնարերին նաև վերջին հատվածը և ամրողացվի թարգմանությունը:

Պետք է ենթադրել, որ պահպանված թարգմանությունը առաջին սկագրությունն է, որովհետ առաջին արարի ձևուղիքի վրա կան բաղմաթիվ շնչումներ, երբեմն ամբողջական էջերով: Աստիճանաբար, փորձ և վարժություն ձևոր բերելու շնորհիվ, այդ շնչումները նվազել են, իսկ վերջում համարյա անհնատացել: Առաջին էջերում թարգմանության լեզուն, ուր անհարթ է, իսկ վերջում՝ ավելի հզկված ու սահուն: Սա ես վկայում է, որ առաջին և վերջին արարների թարգմանությունները միմյանցից հեռու ժամանակներում են արված, մոտավորապես մեկից մեկ և կես տարվա ընթացքում:

Հետաքայում Չովանյանը չի անդրադարձել «Համելեար» թարգմանությանը: Հավանաբար պատճառը Մասհեյանի թարգմանությունն էր (լույս է տեսել 1894-ին), որի համեմատությամբ իր կատարած համարել է պակասավոր և անարձան նկատել լույս աշխարհ: Բերելու ի գեպ, Չովանյանը գրախոսել է Մասհեյանի թարգմանած «Համելեար»<sup>10</sup>: Այդ հոգվածից երեսում է, թե նա որպան լույս է իմացել Շեքսպիրին ընդհանրապես և «Համելեար» ողբերգությունը՝ ժամանակորապես:

Անկախ Չովանյանի թարգմանության մակարդակից, նրա արած գործը պատմագրական մի իրողություն է, որ հարստացնում է հայ շեքսպիրականի պատմությունը և դա կդրավի իր տեղը շեքսպիրյան մինչմասելանական թարգմանությունների մեջ:

Անելով այս համառոտ հաղորդումը հայ ժշակույթի երախտավոր գործի վաղ շրջանի թարգմանություններից մեկի մասին, դրանից մի հատված (Համլետի առաջին մենախոսությունը) ներկայացնում ենք ընթերցողին և մասնադիտական շրջաններին՝ այդ թարգմանության մասին պատկերացում տալու համար:

## Հ Ա Մ Լ Ե Տ

Ա. Արար. (Երկրագու տես-ից)

ՀԱՄԼ. — Ո՞՛հ, ինչո՞ւ երկրիս կարծեցյալ կեղևն չկակուզնար, չհալիր վշտեն և արտասվաց հեղեղներով չոչնշանար, կամ ինչո՞ւ հավիտենականն յուր շանթին արձակած չէ անձնասպանին դեմ: Ով Աստվածածի իմ, Աստվածի իմ, որչած ծանծրալի, անհամ և սնոտի են աշխարհի ամեն վայելքները. Աստվածի իմ, ինչպե՞ս կարհամարհեմ այս աշխարհը, որ կծանծրացնե զիս: Անպուղ և խոպան դաշտ մ'է սա, դառն պտուղներով և վայրենի և թանձրամիտ մարդիկներով լի: — Ինչպե՞ս գործերն այս աստիճանի հասան, զեռ երկու ամիս է իր մահվանեն ի վեր: — Ո՞՛չ, զեռ երկու ամիս ալ չկա: Այնշափ կատարյալ թագավոր մ'էր նա, որ ասոր հետ բաղդատելով, Աստված մ'էր իգասերի մը քով. այնշա՞փ գորովալի էր մորս համար, որ թույլ չէր տար հողմոց ուժգնապես փշելով զայն բարկացնել: Երկի՞նք և երկիր, պե՞տք է, որ հիշողությունս չկորսվի. ի՞նչ, կամունանա անոր հետ որովհետև նա զայն հրապորեց յուր հարստությամբն, և սակայն զեռ ամիս մը անցավ... Զեմ ուզեր այս բանին վրա մտածել: Տկարությո՞ւն, զու և կինը միենույն անունն ունիք: Դեռ ամի՞ս մը չկա: Նույնիսկ զեռ չէ հինգած այն կոշիկն որով նա յուր ամուսնույն ետեն զնաց արտասվելով: Այո՛, նա: Ո՞վ երկինք, անասունը, որ զուրի է բանականութենի, ավելի երկար ատեն պիտի պահեր յուր արտմությունը: Ամուսնացած հորելքրորա հետ, որ չնմանիր բնավ հորս ինչպես ես՝ Հերակլեսին: Ամսվա՞ն մը մեջ: Ամուսնացավ նա զեռ արտասուրեն ուսեցած աշքերուն կարմրությունն շանցած: Ո՞՛, հանցավոր շտապում. սրբապի՞ղծ ամուսնություն մը ընել: Ասիկա լավ բան մը չէ և զիրնար ըլլալ: Բայց, խորտակե, սիրտ իմ, բանի որ ստիպված եմ լեզուս շղթայիր:

(Կմտնեն Հորացիոս, Բեռնարդոս, Մարկելոս):

## ՆԱԽՈՒԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա. Գոպանյան, իմ ուսուցիչներս՝ Եղիազար Մուրատյան, Սրբակիոն Թղթյան, «Հայաստանի կոչնակ», նյու Ցորք, 1930, № 1:
2. «Բուրգաստան մանկանց»—Հավաքածու բարոյական, բրիտանիական, պատմական, ուսումնական, աշխարհագրական և այլ պիտանի զիտելյաց պատկերագրադ ամսագիր. լույս է տեսել Կ. Պոլոստ 1882—1890 թթ., Հրատարակիչ՝ Նշան Պերպերյան, խմբագիր՝ Կ. Կարակուլյան և ապա Ա. Տյովելիան. «Բուրգաստան մանկանց» հանգեստում լույս է տեսել Ալեքսանդր Կիրոյի «Փոքրիկ Սավասցին», որի մաքրագիր օրինակը գտնվում է Չոռպանյանի արխիվում:
3. «Իմ կյանքի վեպը», «Փայրար» (Թուտոն), թերթոն № 32:
4. «Իմ ուսուցիչներս՝ տիկին Պրաճիոթիի, տիկին Պլանչ Լըսիո», «Հայաստանի կոչնակ», նյու Ցորք, 1931, № 1:
5. «Հայաստանի կոչնակ», 1930, № 1:
6. Գ. Ստեփանյան, Արքագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, 1962, էջ 314—315:
7. «Իմ կյանքի վեպը», թերթոն № 32:
8. Գրուկանության և արվեստի թանգարան, Չոռպանյանի արխիվ, նամականի:
9. Նույն տեղում:
10. Մեր գրերը—«Համլետի» թարգմանությունը. «Սաղիկ» Հանդես, 1895, Պոլիս, № 1:

## ՄԻ ՄՈՌԱՑԱՍԱԾ ԷԶ ՄԱՍԵՀՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

Հաղորդում Վարազդատ Վարդանյանի

Պոլոստ Հրատարակված «Սուրհանդակ» թերթի աշխատակիցը 1901-ի հունիսին Փարիզում այցելել է այդ ժամանակ զիվանագիտական միսիայով Ֆրանսիայի մայրաքաղաքում զանվոր Հովհաննես Մասենյանին և նրա հետ ունեցած իր գրույցի մասին մի ակնարկ է տպագրել վերոհիշյալ թերթի 168-րդ համարում:

Այդ ակնարկը, որ մինչեւ հիմա չի հիշվել Մասենյանին նվիրված հոդվածներում և վերշերու միայն վերաշարագրված տպագրվել է «Ալիքում», ուշագրավ է նշանավոր թարգմանչի կերպարն ամրողացնելու առումով:

Նախ Մասենյանի արտաքինը ըստ «Սուրհանդակի» աշխատակիցի. «Անկենծությամբ և բարությամբ լիցուն լայն զեմքի մը վրա կրացվին երկու սե, խոշոր, խելացի աշքեր: Բարձր ճակատ մը, որ իր ետքը կհովանալորեք ամեննեն փայլուն, ամեննեն զորեց ու ամեննեն արգավանդ խացություններն են կը: Իր խիստ թափ և թուխ պեխերը՝ անական, աննվաճ կամք մը ու անհողդող նկարագրի մը տպագրությունը կշեշտեն: Իր ամրող զեմքնեն կարտացողէ հմայիք ու աղնվության անդիմադրելի ճառագայթում մը:

Նկատելով, որ «Սուրհանդակի» աշխատակիցն իր այցելությանը հարցազրույցի հանդամանք է հաղորդում, թարգմանիչը շտապում է կանոնական. «Ո՞չ, ի՞նչ հարկ, ես չեմ սիրեք շուրջս հանված աղմուկը»:

«Սուրհանդակի» աշխատակիցը, տեսնելով սեղանի վրա «Համլետի» հայերեն թարգ-